Հայ նշանավոր նկարիչները Կահիրեի 6-րդ Միջազգային Բիենալեում – թերթ, «Ջահակիր., 19.12.1996

Կահիրեի 6-րդ Միջազգային Բիենալեին մասնակցելու նպատակով Երևանից ժամանել են չորս նշանավոր նկարիչներ՝ Արամ Իսաբեկյանը, Ալբերտ Ավետիսյանը, Սամվել Համբարձումյանը և Արա Հայթայանը: Նրանց 3-ական ստեղծագործությունները, աշխարհի մի քանի տասնյակ երկրներ ներկայացնող արվեստագետների աշխատանքների կողքին, ցուցադրվելու են նաև Կահիրեի արվեստի ազգային կենտրոնի ցուցասրահներում, որի բացումը տեղի ունեցավ անցյալ կիրակի՝ դեկտեմբերի 15-ին:

Հիանալի առիթ է ներկայացնել Հայաստանի ժամանակակից կերպարվեստը թե՛ Եգիպտոսի և թե՛ միջազգային արվեստասեր հասարակությանը: Գոհունակությամբ կարելի է արձանագրել, որ հայ արվեստագետների մասնակցությունը, Եգիպտոսում կազմակերպվող միջազգային մշակութային կարևոր ձեռնարկը կդառնա ավանդական, որը անշուշտ վերջին շրջանում հայ-եգիպտական բարեկամության և տարաբնույթ կապերի զարգացման արդյունքն ու վկայությունն է:

Նշենք, որ մրցույթին մասնակցել են 46 երկրներից 181 նկարիչներ 348 գործերով: